ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2
ԵՊՀ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
N «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/246-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«28» հունիսի 2025թ.

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը, ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա /այսուհետ «Պատվիրատու» մի կողմից, «Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ-ն, ի դեմս «Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ-ի տնօրեն Կ.Վարդանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից /երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր/ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին «27» դեկտեմբերի 2024թ. կնքված N«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/246-1» ծածկագրով ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի կարիքների համար հատուկ նշանակության լաբորատոր կահույքի գնման պայմանագրի 1-ին չափաբաժնի մատակարարման ժամկետները երկարացնել 30 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
«ԵՊՀ» Հիմնադրամ	«Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ
ք.Երևան. Ալեք Մանուկյան 1	ք. ՎԵԴԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ Փ 6
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ակբա բանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 01506928	ՀՎՀՀ 04250902
Հ/Հ 2470100009060000	Հ/Հ 22039333151000
պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան	Տնօրեն՝ Կ. Վարդանյան
----------	----------
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ